

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանը մասնակցեց հինգերորդ Հայ-ռուսական միջտարածաշրջանային և Եվրասիական գործընկերության միջազգային համաժողովների աշխատանքներին

15.10.2016

Յոկտեմբերի 14-ին Մարզպետ Գաբրիել Գյոզալյանը մասնակցեց հինգերորդ Հայ-ռուսական միջտարածաշրջանային և Եվրասիական գործընկերության միջազգային համաժողովների աշխատանքներին:

Վարչապետ Կարեն Կարապետյանի և Ռուսաստանի Դաշնության տրանսպորտի նախարար, Հայ-ռուսական տնտեսական միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Մաքսիմ Սոկոլովի ներկայությամբ ստորագրվեցին հայ-ռուսական փոխգործակցությանն առնչվող փաստաթղթեր: Մասնավորապես, ՀՀ կառավարության և Ռոստովի նահանգի միջև ստորագրվել է առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային ոլորտներում համագործակցության համաձայնագիր, Գեղարքունիքի մարզի և Օմսկի նահանգի կառավարության միջև ստորագրվեցին առևտրատնտեսական, գիտատեխնիկական և սոցիալական ոլորտներում համագործակցության համաձայնագիր: հայկական և ռուսական կողմերի միջև ստորագրվեցին նաև ենթակառուցվածքային, կրթական, գիտատեխնիկական ներդրումային ոլորտներին առնչվող այլ համաձայնագրեր:

Եվրասիական գործընկերության միջազգային համաժողովն անցկացվեց ՀՀ կառավարության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աջակցությամբ: ԵԳՄՆ նպատակն է նպաստել Եվրասիական տարածաշրջանում երկկողմ և բազմակողմ տնտեսական համագործակցությանն ուղղված ինտեգրացիոն գործընթացների զարգացմանը: